

# ԺԱՅԱԳՐԱԿԱՆ

## ՀՈԳՈՒ ՇՈԱՅԼՈՒԹՅԱՄԲ

1985 թվականի հուլիսի 20-ին լրանում է պագային բարերար Գալուստ Կյուլպենկյանի մահվան երեսնամյա տարելիցը։ Սերնդափոխության օրինաչփությամբ երեսուն տարին առավելաբար միագնումի և մոռացության ժամանակ է, իսկ Գալուստ Կյուլպենկյանի անունն այս երեսուն տարիներին դուրս եկավ ապային շրջանակներից և վերածեց միջազգային բարերարի համբավի։

Կեսարիայի թալաս գուղաքաղաքում ծընված պատանին զարմանալի վճռականությամբ հաղթահարեց իր և իր սերնդի առաջ լենսացող դժվարությունները և քայլ առ քայլ հասավ ինքնահաստատման։ Գործարար և շրջահայց հայը հետպիետե ամրապնդեց իր լոյթական հնարավորությունները և միջազգային ասապրեկ դուրս եկավ։ «Գալուստ Կյուլպենկեան, միջազգային տընտեսական կեանքի մեջ հոչակուած անուն մը դարձաւ, տակաւին իր երիտասարդութեան տարիներէն, իբրև փայուն իմացականութիւն և տաղանդաւոր գործարար անձնաւորութիւն։ Ծոայլօրէն պայծառ իր միտքը, իր բարոյական ամուր նկարագիրը և աշխատանքի ստեղծարար կիրքը՝ առաջնորդեցին զինք յաջողութենէ յաջողութիւն, որով իր կեանքի վերջալոյսին, ան հանդիսացաւ իր ժամանակի մեծագոյն դէմքերէն մին, տնտեսական միջազգային բեմի վրայ»։ գրում էր Վեհափառ Հայրապետը Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված կոնդակում։

Սակայն Գալուստ Կյուլպենկյանը ճեղքեց իր ժամանակի սահմանները և դեռ պիտի շարունակի իր երթը ժողովուրդների հիշողու-

թյան մեջ, որովհետև ոչ միայն իմացավ ինչպես ունենալ, այլ նաև ինչպես բաշխել։ «Ինչ օգուտ ունի մարդը, եթե ամբողջ աշխարհը շահի, բայց կորցնի իր անձը», այսինքն իր հոգին գերի դարձնի իր ունեցվածքին, հարցում էր Քրիստոս։ «Ինչ կայող է ունենալ մարդը իր անձի դիմաց» (Մարկ. Ը 37)։ Եվ Գալուստ Կյուլպենկյանը գտավ կյանքի կարևորագույն բարոյական սկզբունքներից մեկը. ոչ ոք չի կարող մեծ լինել, առանց հոգեկան առաքինության, եթե նույնիսկ ամբողջ աշխարհն է շահել։ «Հարուստներ շատ կան, նաև մեր ազգի զավակներից։ Բայց շատ-շատերին տանջում է ավետարանական հարցը».

«Տացո՞ւք, թէ ոչ տացուք» (Մարկ. ԺԲ 14), նույնիսկ երբ անվանապես դիմում եւ նրան պագային այս կամ այն կարիքը հոգալու։ Գալուստ Կյուլպենկյանը չունեցավ այդ հարցի հոգեկան տագնապը, որովհետև իսքը ապրեց իր ժողովրդի կարիքներով և առատաձեռն բաշխումով, հոգու շոայլությամբ տըվեց իր ժողովրդի կարիքները դարմանելու համար։ Իսկ այդ կարիքները շատ էին. Եղենից փրկված և աշխարհով մեկ սփոռված ժողովուրդը վերակենդանանում էր, ազգային վերականգնում էր ապրում, իսկ հայրենի հողի վրա նոր Հայրենիք էր կառուցում։ Ժողովրդին լուսավոր միտք էր պետք և լուսավորություն՝ դպրոց և գրադարան, ժողովրդին հոգևոր կայունություն էր պետք՝ եկեղեցի։ Եվ Կյուլպենկյանը, «Զի օրինակ մի ետ ձեզ» (Յովհ. ԺԳ 15) իր ունեցվածքից բաժին հանեց ոչ միայն իր ժողովրդին, այլև ուրիշներին։ Նա հավատում էր քրիս-

տուսավանդ խոսքին. «Տուք, և տացի ձեզ» (Ղուկ. Չ 38):

Գալուստ Կյուլպենկյանը առանձնապես առատածէոն եղավ Մայր Աթոռի նկատմամբ: Նա քաջ գիտակցում էր Եջմիածնի կարևոր դերը մեր ժողովրդի կյանքում, և մեծագույնաբ Նվիրատվությամբ օժանդակեց Եջմիածնի Մայր տաճարի վերանորոգմանն ու բարեկարգմանը: Պատահական չէր, որ Վեհափառ Հայրապետը դեռևս 1958-ին իր եռամյա գործունեության վեկուցագրում Գալուստ Կյուլպենկյանի մասին ասում էր. «Երանի անոնց, որ սուրբ հիշատակ մը ունին արձանագրված Ս. Եջմիածնի հավարամայս այս քա-

րերուն և հայ ժողովուրդի սրտին վրա»:

Այսօր, երբ երեսուն տարիներ են անցել մեծահամբավ հայի մահվան օրերից, Գալուստ Կյուլպենկյանը կենդանի է առավել, քան երբեք, որովհետև նրա հաստատած հիմնադրամն ու բարեխրական հիմնարկությունը միջազգային բարերարի համբավ են ապահովել նրա համար: Մեր ժողովուրդը նույնպես բարձր արժանապատվության զգացումով է հիշում նրա անունն ու պայծառ հիշատակը, որպես ազգային բարերար:

«Ճակատենական լիշտակն արդարոց օրինութեամբ եղիցի»:

